


3441

22. V. 1946

# ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՏԻՆ



ՀԵՐՈՍՈՒՏԻՆ

Վ. ԱԵՄԻՐՈՎԻՉ - ԴԱՎԵԿՈ  
===== ԹԱՐԳԻ. Ա. Ա.

30 OCT 200

ՀՐԱՏ. Ս - ԱՆԻ ≡ № 1

91.71

5-52

19 NOV 2010

Վ. ՆԵՄԻՐՈՎԻՉ-ԴԱՆՅԵՆԿՈ

# ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՔԻՆ



Ա. - ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ  
«Պուշկինեան Արագատիսկ», Խեցտուկով փող. 4  
1907

11.07.2013

123

Լեռնակատարը թիսպամած է: Մի  
տեղ քամին, կրծի միջով, պոկեց ամ-  
պերը կանաչ զառիվալրից և վերշինիս  
սեպերի վրայ կարծես հինգ ժայռից  
բասծ տափակ տանիքներ ցցուեցին:  
Մի քանի կնձնիներ պարզել էին նը-  
րանց վրայ իրենց օրհնող աշերը այն-  
տեղ, ուր դէթ մի փաքր հող էր գտնուում:  
Ներքեռում որոտում էր հեղեղատը իր  
մշտնչենական մարտում՝ դէպ հեռաւոր  
ծովը ծգուած ուղին կապող ապառաժ-  
ների դէմ: Ամբողջովին փրփրակալած՝  
յարծակւում էր նրանց վրայ, կրծում,  
փորում էր քարէ մարմինը: Շպրտում  
էր բուռ-բուռ խճաքար՝ ծերպերի մէջ  
ողողած, և ուժուապառ պտոյտ տալով,  
սլանում էր դէպ լառաջ:

Այսօր, տարերային այդ մարտի մէջ  
ներխուռմեցին այլ հնչիւններ:

Կենդանացան սեպալանջերը, զարթե-  
ցին սև խոռոչները. իւրաքանչիւր քա-

րի մօտ մարդ էր շարժւում։ Մառախուղով բարձրացան ալստեղ՝ աւելի մօտ մենաւոր գիւղակին։ Զիաներին թողել էին ներքեռում, չըի մօտ և սողացել կալաքարեալ պատերին — երեխ գիշերով, որովհետեւ սառը օրը նրանց գտաւ ծուղակներում և թագսատոցներում։ Սպասեցին մինչև օրը պարզելը։ Մշուշով չէր կարելի բնակարան որոշել. սակայն գորշ ծուխը հէնց նոր սփոռուեց տանիքների վրայ և հօդմիկը այնտեղից հաղորդեց վառուող աթարի բարկ հոտր։ — զարանեցին կտուրների վրայ հէնց առաջին տանտերերին և անվրէպ գնդակներով նրանց, կարձես, դէն շպրտեցին։

Շփոթ տիրեց գիւղակին։

Համայն զիւղը նետուեց գէպի պարփակները։

Երիտասարդութիւնը հէնց ուղում էր կիսախարխուլ դարպասներից դուրս թռչել, սակայն առաջներն իսկ վէր ընկան գնդակներից։ Միանուազ պալթուեցին հրացանները — շուրջ, կարձես, հաղարաւոր չոր սոտեր էին կոտրատում. մերձտկայ-

քում մի տեղ տիրագին հնչեց շեփորը, ներքեց նրան պատասխանեց երկրորդը... Աղդանշանները թռան սարից սար։ Վերևում գէպ այս ժայռի իսկ կատարը ցած կորացած վաղեցին զիւղի մի քանի պաշտպանները։ Առաւտեան քամին դեռ չէր խանդարում ալստեղ միօրինակ մշուշի գիշերալին հանգիստը։ Նրանց յաշողուեց վեր ենել մինչև բարձրութը և այնտեղ գարան մտնել։ Հէնց որ մէզը նօսրացաւ՝ սկսեցին չոկովի խփել թուրքերին, որոնք գտնուում էին ներքեռում։ Կարծես բառն մէջ։

Մի ժամ կը գեռ չանցած՝ շրջակալքում ամեն ինչ որոտում էր։ Իւրաքանչիւր պայմիւն բազմանուազ կըրկնուում էր լեռներում, և խրտնած կենդանիները ապաւինում էին խորուտները։ Լալիս էին պղնձեալ փողեղերը, աղաղակում էին կանալը՝ մահւան զատապարտուած հայկական բնում, ոռնում էր որջում մնացած տնալին տաւարը։ Իսկ ներքեռում, ծերպերի մէջ փրփրում էր դադար չիմացող հեղաղատը։

\* \* \*

Կէսօրի դէմ գիւղակում կրակ բոլն-  
կեց:

Մէջը վաղուց կերպարանափոխուել  
էր ամպերի: Ամպերն եւան անհասա-  
նելի բարձունքները՝ ժայռերի և սե-  
պերի վրայ խոնաւ հետքեր թողնելով:  
Չգուեցին երկնի վրայ և դանդաղօրէն  
շարժուեցին դէպ հեռաւոր ծովր: Լերկ  
կատարները վեհապանծ և արքայօրէն  
լողում էին կապօւտակի ովկիանում  
և միմիայն արծիւների սև կէտերն էին  
կենդանացնում խորհրդաւոր անապատը:  
Սւելի ցած, կրների և ծերպերի զըլ-  
խին հաւաքւում էին ագռաւների երամ-  
ներ: Հրացանների պայթիւնի և անխոնչ  
հեղեղատի որոտի միջից լսելի էր ուրա-  
խածայն, ինքնագոհ կռաւոց: Մարգ-  
կային չարութիւնը լիսաւղան հացկե-  
րոյթ էր պատրաստում և՝ հանգիստ  
թառած ժայռերի ու սակաւաթիւ ժա-  
ռերի ցցուածքներին, սևափետուրները  
տեսնում էին տասնեակներով գետնա-  
տարած դիակներ, նրանց խուփ աչքերը,  
անհեթեթ պարզած ձեռները, անշարժ-

կրծքերը և ահագօրէն մաքրում ու  
սրում էին իրանց պողպատէ կտուցները:  
Սուաշինը եկեղեցին բռնկեց:  
Կարմիր լեզուն լիիցեց փայտեալ սիւ-  
նը, ծգուեց նրանով օժանման, ծխա-  
պատեց, և յանկարծօրէն պատռեց  
ոսկէշիթով կտուրն ընդանց... Կառ-  
չեց նրան, սև քուլաներում պահ մտաւ  
և — երբ քամին նրանց ցրիւ տուեց—  
բոցը արդէն տիրաբար սողում էր հին  
փայտի վրայով:

Դուրս թռաւ ծերունի քահանան,  
բայց վրայ հասած գնդակը վէր զցեց  
նրան՝ երեսովը կրակի մէջ: Նեղ փողոցով  
դէպիներք և յատկուեցին տղակը և կա-  
նալը, բայց այստեղ, կարծես, ինչ որ  
դաժան, չոր բան թափուեց խլացու-  
ցիչ կոտորակների նման... Մարդիկ  
ոլկում էին — ալլես չվերկենալու հա-  
մար — այնտեղ, ուր հասնում էին նրանց  
արծնեալ մոծակները, որոնք չարացած  
մխւում էին նրանց երեսին, զլիին,  
կռնակին:

Ապառաժի թիկունքը լուռ էր:  
Հայ երիտասարդները վաղուց ի վեր  
սպառել էին այնտեղ իրանց փամ-

փուշտները և այժմ անշարժ պառկած  
էին ժայռի վրայ՝ սրախողիսող, գան-  
գափշուր... Ալ շիթերը ծորում էին  
դորշ քարովը դէպի ցած և նրա վրայ  
ցամաքում արիւնալին տարօրինակ տա-  
ռերով...

\* \* \*

Իրիկնադիմին մխացող աժխի կոլտեր  
էին մնացել զիւղից... Ծխի ու զրօ-  
շակները ծածանում էին ամեն կողմ,  
մերթ բանալով, մերթ գոցելով անթիւ  
կոակների կարմիր, բորբոքուած աչքե-  
րը: Թէժութիւնից կնծնիները կծկում  
էին և իբրև երկնքի սրբազան լուս-  
թիւնը մատնանշող բոցեղէն մատ, կան-  
դնած էր ահազին հրավառ սիւնը՝ հըլ-  
կիզուած եկեղեցու վերջին մնացորդը:  
Փողոցները—քարքարոտ, ոլորապտոյտ,  
մերթ զառիվայրով փարած, մերթ  
աստիճանաբար իշնող—դիակներով են  
կապած: Որտեղ ընդհարումը աւելի  
լուսահատական է եղել, գիտակոլտեր  
էին կանգնած: Կոյտերի միջից դուրս  
էին ցցուել ոտներ և ձեռներ. թա-

թերից մի քանիսը կծկում ու ծզում  
էին մատները, ներբանները քաշքշում  
էին... Կեանը զեռ բոլորովին չէ մա-  
րել հեկատոմբերում: Կիսալրած տղայը  
մոխրակոյաի վրայ ցոյց էին տալիս սև,  
ածխացած երեսները Ծծկերները—տնե-  
րի անկիւններին փշրած դանգերով—  
դէշի նման վէր էին ընկած: Ողջ մնա-  
ցած շները մի տեղ կաղկանձում էին,  
և ամեն ինչ ծածկում էր հեղեղատի  
չարացած աղմուկն ու ագռաւալին  
երամների յաղթակտն կուաւոյը:

Թուրքերը ներքեւ էին քշում կեն-  
դանի մնացածներին:

Գերիների թւում տղամարդ չկար:  
Մի քանի տղայ, կին ու աղջիկ:  
Մինը յետ մնաց:

Ամբողջովին արեան և ցեխի մէջ  
թաղուած: Թուրքը ճօնեց կուրբաշին  
և ակօսեց նրա մերկացած ուսը: Մար-  
մնի վրայ իսկոյն կարմիր սպի ուռեց:

— Դէ՛, շաապի՛ր, բրիստոնեալ շուն:  
— Զե՞մ կարող — հառաչւց նա —  
տեսնում ես ոտներս:

Քարքարոտ ցցուածքները պատա-  
ռուել էին ոտները և արնոտել...

Թուրքը յառեց խօսողին։  
 — Թո՞ղ ինձ ալստեղ մեռնեմ. քո  
 ինչի՞ն եմ պէտք, ծեր եմ և անկար։  
 — Իրօք որ աւելորդ է...  
 Բոնեց մազերից, յետ ոլորեց զլուխը  
 այնպէս, որ վիզը գուրս ցցուեց, եա-  
 թաղանով հարուած տուեց և քացով  
 դէն հրեց քաշբշող մարմինը...

\* \* \*

Առջեռմ ասկերները տանում էին  
 մի աղջիկ։

Սևաթոյր՝ որպէս ծիւթ հիւսերը  
 ծանրաքարշ յետ էին ընկել թիկուն-  
 քին, մեծ-մեծ, բոցավառ աշերը հպարտ-  
 օրէն և համարձակ նայում էին չար-  
 չարիչներին։ Գեղեցկուհին—պերճահա-  
 սակ՝ ինչպէս չինար, իր յետեից, կար-  
 ծես, յաղթական մի ամբոխ էր քարշ  
 տալիս։ Երբ տաճիկ սպան ձեռք զրեց  
 նրա լիքը, ուժեղ ուսին՝ այնպիսի մի  
 արհամարհական հայեացք զցեց տաճկի  
 վրայ, որ վերջինս մի կողմ քաշուեց,  
 մրթմրթալով։ «Ես քո հախից կրզայի,

եթէ փաշայի հրամանը վինէր»։ Եւ  
 ապա, ժպտաղէմ գարծաւ զէպի նա.

— Գայիհանէ, մի՛ վախենար, մենք  
 քեզ ձեռ չմնը տայ. դու մեզ կենդանի  
 ես պէտք։

— Ես ոչ ոքից չեմ վախենում. իսկ  
 մահց ծիշտ մեր ձեռին է։

— Աղջկայ բան չը քո արածը. մենք  
 զիւտենք, որ դու ես եղել երիտասար-  
 դութիւնը Ալի-Մահմեդի քրդերի դէմ  
 ոտքի հանողը։

— Նրանք կոտորեցին մերոնց, ներ-  
 քւում ալրեցին հայկական գիւղը և  
 տարան մեր աղջիկներին։

— Այդ որ ժամանակից են սկսել  
 ըրիստոնեայ շները իրանց տիրոջ պատ-  
 ճող ձեռները կրծոտել։

— Այն ժամանակից, երբ վճռեցինք  
 ինքներս լինել մեր տէրը։

— Դու կուում էիր առաջին շար-  
 քերում և վիրաւորեցիր հուսէնին։

— Կուուի դաշտում։

— Քեզ զլխովին նրան կրյանձնեն։

— Գլուխս էլ կրստանայ, բայց ա-  
 ռանց մարմնիս։

Սպան ծիժաղեց։

— Վաղուց է, որ դուք, սարուկ-ներդ և սարուկների զաւակներդ այդ լեզուով խօսել էք սովորել:

— Հայերը երբէք սարուկ չեն եղել: Սարուկ չէ՞ նա, որին ուժով են շրջ-թայակապ պահում: Մենք մեծ ազգի մասցը ենք և աւելի մեծ ցեղի նախահայրդ ենք և աւելի մեծ ցեղի նախահայրդ ենք: Ո՞վ պաշտպանեց քրիստոնեայ աշխարհը ձեր յաղթական արշաւանքներից: Երբեմն մենք բազմաթիւ էինք: Մեր իշխանութիւնը՝ ծովից ծով — Տէրը կանգնեց իրեւ պատուար աղատ ժողովուրդների: Դարեր շարունակ կոռուել ենք մենք ձեր դէմ, և քսանչինդ միլիոն աղատ հայոդիներից հինդ միլիոն էլ չի մնացել: Նայի՛ր շուրջդ. այն բոլորը, ինչ որ առաջդ տեսնում ես, մեր արիւնով է ներկուած: Ամեն մի ժայռ, եթէ կարողանար, կրպատմէր քեզ մեր յաղթութիւնների և տանջանքների մասին: Դուք մեզ ատում էք և վրէժ խնդրում, որովհետեւ չէք կարողացել մինչեւ այժմ հայաստանի մեծ Ողին սարկացներ ինչպէս արծուի, շղթայել էք դուք նրան և դցել էք երկաթապատ վանդակը,

սակայն հոգին շղթայ չի ճանաչում: Ականջ զիր մէկ, ի՞նչ երգեր ենք մենք երգում բանտերում: Կանի երգը կենդանի է՝ ժողովուրդը չի մեռած: Մինչեւ այժմ մենք մարտիրոսներ էինք, բայց փառք և պատիւ հայ կնոց: Իզուր չէ, որ մենք կրթուեցինք և յետ գարձանք մեր խնդն զիւղերը՝ օդնելու նրանց, որոնք խաւարի մէջ են խարխափում: Նահատակւողները լսեցին մեզ և քինախնդիրներ դարձան: Բոնակալները կարող են դեռ հանդիսաքննել — առ այժմ զեռ ժողովուրդը վախենում է և լռում... Բայց երբ նրան կծանծրացնի լռութիւնը և վախը՝ թաղաքասափի նեղիչը: Ո՛չ մի գժուար բան չկայ, ամենաանհնարը խոնարհուում է նրա առաջ՝ ով չի տատանւում յաղթութեան կամ մահու մէջ: Երբ մէկը չի ուզում սարուկ ապրել՝ ձեր աիրապետութեան վախճանն է... Նրա ժամը չնչել է, իսկ թէ մենք կրկորչնք կամ ոչ — միենոյնն է: Հայ վարժուհուն աշակերտած տղաները գիտեն, որ իրանք մեծ ազգ են և իրանցից է կախուած յետ ստանալ իրանց նախկին աղատու-

թիւնը: Մենք չենք կամենում ձեզա-  
նից անշատուել: Մեր երազն է՝ ապրել  
ձեզ, հաւասարներիդ հետ հաւասար,  
ազատներիդ միշե՝ ազատ:

— Մի ֆշշա, օձ... թէ չէ երգւում  
եմ, որ փաշային դլուխդ կըտանեմ:

Դայիանէն ծիծաղեց և, կռանալով  
պարանոցը դէմ արեց:

— Կարի՛ր, եթէ համարձակւում ես,  
ստրուկի: Կարիր և տե՛ս, թէ ինչպէս  
է մեռնում հայ աղջիկը... Քամին կը-  
տեսնէ այդ և կըպատմէ սարերին...  
Ծառերը իրանց սոսափիւնով կըհաղոր-  
դէն հաւքերին, իսկ հաւքերը կըսփռեն  
աշխարհի չորս կողմը և ամեն տե-  
ղից վրիժառուներ կըհաւաքուեն... Դէ՛,  
սպասում եմ: Նայի՛ր, սպրդնեցի՞, դո-  
ղում եմ ես քո սպառնալիքից: Դու,  
շնագալլ, անկարող ես խռովել «Սիւ-  
նեաց երկրի առիւծին»:

— Քեզ այդպէս անուանողը իր մսով  
կերակրեց Տրապիզոնի տպաւներին:

— Իսկ նրա երգերը մնունդ են տա-  
լիս տարաբաղդ ժողովրդի սրտին ու  
հոգուն:

— Նա, այդ երգիւը քո փեսան էր:

— Այո՛, բայց ես լաց չեղայ նրա  
վերայ: Նահատակների վրայ չեն ող-  
բում, այլ նրանցով ուրախանում են:  
Հէնց այն գործն է միայն հաստատ,  
որի համար մարտիրոսի արիւն է թափ-  
ած: Իսկ մահը — ոչինչ: Մենք բո-  
լորս էլ պիտի մեռնենք: Քեզ էլ պիտի  
կըծեն որգերը այնպէս՝ ինչպէս ինձ  
պիտի կացահարեն գիշատիչ թռչուն-  
ները...

\* \* \*

Երկու օր անց հեռուն, ներքեռում  
կապուտակ երևաց:

Կարծես ոտների տակ յանկարծ ան-  
դրունդ բացուեց... Երբ արեւը վեր բար-  
ձրացաւ, կապուտ անսահմանութեան  
մէջ հանդէս եկան ծալուածքներ նրանց  
մէջ միուեցին կանաչերանդ ցցուածք-  
ներ: Մօտակալքով, որորների թեերի  
նման լողում անցնում էին առագաստ-  
ներ: Աև ծովը բուրում էր այնտեղից  
թարմութիւն և զովութիւն... Զախա-  
կողմում հազիւ նշմարում էր սպի-  
տակ Տրապիզոնը, և նրա պարիսպների

վրայ — ինչպէս իրար հիւսուած ան-  
թիւ սանդուխների աստիճանների  
վրայ — խաղում էին հարաւալին հե-  
ղանամբոյր արեգակի պայծառ ճաճանչ-  
ներ...

Գալիքանէն յետ նայեց. հրկիզուած  
գիւղակի հայ գերիների կէսն անդամ  
չէր մնացել:

Նա մտաբերեց կանանց կանչը և  
երեխաների խլացուցիչ վայնասունը  
դիշերով:

— Զեր թափած արեան իւրաքան-  
չիւր կաթիլի համար շատ ծանրագին  
հատուցում պիտի տաք ժողովրդին:

Տաճիկ սպան ծիծաղեց:

— Քո՞ ժողովրդին. լսե՞լ ես նապաս-  
տակի գալլից վրէժ լուծելու հեքիաթը:

— Մի ուրիշ հեքիաթ էլ կայ: Դարն-  
ւեցին անվախ որսորդներ՝ գալլի վե-  
րայ յարձակուելու:

— Հայերից:

— Թուխսպը հեզ գոլորշու ձեռվ է  
բարձրանում դեսնի երեսից... իսկ կայ-  
ծակը շանթում է պալատներ և մրգ-  
կիթներ: Անվեհերութիւնը հաւասա-

ըում է տկարին ուժեղի հետ: Խելքից  
բղխում է յաղթութիւն...  
— Այդ գպրոցնումն ես սովորել:  
— Դեռ ուրիշ շատ բաներ: Աշխար-  
հիս երեսին միմիայն երկու իսկական  
ոյժ կայ, ոչ աւելի:  
— Որո՞նք են:  
— Մեծահոգի ծիտըն և նահատակի  
արիւնը:

60130-67

\* \*

Փաշայի մեծ բակը՝ ամբողջովին մի-  
նարներով ստուերամած: Արեգակը ոս-  
կենան շողջողում է մոխրագոյն ա-  
ղիւսների վրայ: Մեղմ կարկաչում է  
շաարուանի աղբիւրակը: Մարմարիոնի  
վրայ ներհիւսուած են ծփիներ: Գերի-  
ներին այսաեղ բերին. ամեն կողմից  
զափիթիաներ հաւաքուեցին: Մուշարամ-  
բիների վանդակներից նայում էին փա-  
շալի կանալը: Լսել էին, որ գեղեցկուհի  
Գալիքանէին են բերելու և ազահօրէն  
փնտրում էին նրան կապոտած հայ  
կանանց փոշապատ, խոշտանգած խրմ-  
բի մէջ: Եթէ ևեսպի լինի, հարեմ

Հայ եերոսուհի  
ԽՍ.ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀՀ. ԲԻBLIOSTEKA  
ՀԱՅՈ-ԱՐՄ. ՀՀ. ՀԱՅ

կրնկնի: Այդ գէպքում պէտք կըլինի  
նրան հաշուի առնել: Այդպիսի գեղեց-  
կուհուն փաշան քուրդ իշխանին չի  
յանձնի, ինքը կըվերցնի. գնա՛ ու նրա-  
նից իրաւունք պահանջիր:

Գայիանէն նստաւ չինարի տակ:

Ձեռում ունէր երկու վարդ՝ կեանքի  
վերջին ողջոյնը, անյայտ բարեկամի  
«մնաս բարեր»: Պայծառ և տօթ փո-  
ղոցով նրան անցկացնելիս, վերևից  
յանկարծ նրա անունը լսուեց: Դլուխը  
բարձրացրեց: Պատուհանի վանդակը  
բացուեց և խուլ թխկոցով վայր ըն-  
կաւ: Գայիանէն տեսաւ ատների տակ  
ծաղիկներ... Ո՞վ էլ լինես, թող տա-  
ռապեալների Աստուածը օրհնէ քեզ՝  
անուշաբոյր փաղաքշանքիդ փոխարէն:  
Կարեկցութեան հեղ ճառագայթ շո-  
ղացրիր դու վերջին տանշանքի դա-  
տապարտուածի վրայ: Այդ ծաղիկնե-  
րով սրբազան հայրենիքը, կարծես,  
ասաց. «Ես զոհերին չեմ մոռանում և  
յաղթութեան ժամին քո լիշտակի  
առաջ ծունք կըզնեն ազատ մարդիկ»...  
Տօթակէզ փողոցը յետևում մնաց: Մո-  
տենում էր վախճանը:

Փաշան ինքը գուրս եկաւ:  
Մարմնեղ, մուգ կարմիր: Անգութ,  
ուսան աչքեր և խոշոր, զգայական շրբ-  
թունքներ:

— Ո՞ւր է Գայիանէն:

Սպան ծօտ տարաւ:

— Դու շատ սիրուն ես կախաղանի  
օղակի համար: Ես քո մասին լսել էի,  
բայց պատմուածքը միշտ դժգոյն է  
լինում: Դեռ ժամանակ կայ քեզ կա-  
խելու: Մեր մոլլան կայցելէ քեզ իմ  
հարեմում: Եթէ քո գեղեցիկ զլխում  
գեթ մի կաթիլ ուղեղ կայ՝ դու կըհաս-  
կանաս, որ ծշմարիտ կրօնն այն է, որը  
յաղթութիւն է պարզեսում: Սուլթանը  
կրինալէ մահմեդականուհուն և իմ  
կնոշը...

— Փաշա, ես երբէք չեմ դաւաճանի  
իմ հալրերի հաւատին և քո կինը չեմ  
դառնայ:

— Գիշերն ու առաւօտը քեզ այլ  
բաներ կըսովորեցնեն:

— Ո՞չ: Ուղարկիր ինձ մահապատժի  
իմ լնկերուհիների հետ միասին: Մի-  
միայն այդ ողորմածութիւնն եմ իրն-  
դրում քեզանից: Ես լեռնալին մի գիւ-

դակում մացրի ղիտութեան ջահը —  
թոյլ առուր ինձ վերջին ժամին մերային-  
ներին մխիթարելու:

— Ի՞նչ որ ասացի, այն էլ կրլինի:  
Մարակն ու քաղցր փայրի ձիուն հեզ  
և հնագանդ են գարծնում:

— Բայց ոչ ժողովրդին ժառայող  
կնոշը:

— Տարէք դրան:

Մոլլան ողջ օրը համոզում էր գե-  
ղեցկուհուն... Երբ նա գնաց, նրա տեղը  
փաշալի նախկին կինը բռնեց և պա-  
զատում էր Գայիխանէին ինայել իր գե-  
ղեցկութիւնն ու ջահէլութիւնը.

— Ե՛ս էլ էի հայուհի... Կնոջ նա-  
կատագիրն այսպէս է՝ մեր հոգին ու  
մարմինը պատկանում է մեր տիրոջը:

— Ո՛չ, մայրիկ, մարմինս նրան, ո-  
րին սիրում եմ, իսկ հոգիս՝ Ասածուն:  
Դու շատ ծեր ես, վաղուց ի վեր չես  
տեսել մերոնց: Աղատութեան հով է  
փիսում սարերում: Հոււ հօտը ժողո-  
վուրդ է դառել: Նրանք, որ մայրենի  
լեզուն մոռացութեան էին տուել՝ նո-  
րից սովորեցին: Ոտուսասանում, որ-  
տեղից ես եկել եմ, հայերը ոռւսերէն

էին խօսում: Հայ աղիկները երազում  
էին ոռւսներին մարդու գնալ, նրանց  
եղբայրներն էլ՝ ոսուհիների հետ ամուս-  
նանալ: Մենք փոխել էինք մեր անուն-  
ները լստ ոռւսականի: Երգում էինք  
ոռւս երգեր, սովորում էինք ոռւս զըր-  
քերով: Հայ պատանիները զնում էին  
հիւսիս՝ ոռւս բարձրագոյն դպրոցները:  
Մեղ փաղաքշում էին, հովանաւորում.  
մեղ եղբայր էին համարում — և մենք  
արդէն սկսել էինք մեր կրօնակիցների  
հետ ձուլուել: Զէ որ այնքան քիչ էր  
մեր և նրանց զաւանանքի տարբերու-  
թիւնը: Երկու-երեք սերունդ ևս՝ և  
հայութեան անունն իսկ կրչնչուէր ընդ-  
միշտ: Սակայն, Աստուած չկամեցաւ  
երեկ այն ժողովրդի կորուստը, որ իր  
լաւագոյն զաւակների սրբազնագոյն  
արիւնով այլքան երկար ծառայել է  
նրան... Պետերբուրգում այլ հովիր  
փչցին: Մեղ, որ իրանց բարեկամն  
էինք՝ թշնամու տեղ զրեցին: Փակեցին  
մեր դպրոցները, և մենք յանկարծ լի-  
շեցինք, որ հայ ենք: Արգելեցին ողոր-  
մելի գոյութիւն պահպանող հայ լրա-  
զըները՝ և ողջ ժողովուրդը խօսեց իր

լեզով։ Մէնք ուսուցիչներ հրաւիրեցինք Կ.-Պօլսից, Զմիւռնիալից, և, ոչընչացրած մէկ հայ դպրոցի փոխարէն, կազմուեցին հազարաւոր դպրոցներ — իւրաքանչիւր հայ ընտանիք դպրոց դարձաւ։ Անվատահութիւնը դէպի մեղ վիշտ ծնեց. արհամարանքը՝ վիրաւորանք. չարութիւնն ու հալածանքը՝ միացրին տարաբաղդներին։ Մէնք ուղղուեցինք դէպի մեր եկեղեցին։ Երեկուայ մեր բարեկամները անրմբոնելի կուրութեամբ կամենում էին Աստուծոյ սեղանն ևս յափշտակելու... Դու դիտես, թէ ինչ պատահեց... Մեզանից ոչ մէկը չի ուզում բաժանուել այնտեղ Ռուսաստանից, այստեղ՝ Թիւրքիայից. սակայն մենք պէտք է հաւասար լինենք հաւասարների միջին, ազատ՝ ազատների միջև. Նախ և առաջ մարդ, և ոչ թէ հօտ... Եւ որքան շատ, որքան ատելութեամբ են ծնշում և ոչնչացնում մեզ՝ հաւատա՛, մայրիկ, նոյնքան մօտ է յաղթութեան պայծառ օրր։ Այնտեղ մեր դէմ կանգնեցնում են թուրքերին, այստեղ՝ քրդերին։ Մէզն պաշտպանում, նշանակում է ինք-

ներս պէտք է պաշտպանուենք։ Մէր երիտասարդութիւնը մեծանում է այն վիտակցութեամբ, թէ պէտք է ուժեղ և քաշարի լինել։ Ո՞չ, մայրիկ, ազատութեան մեծ դործին ամենից լաւ ծառայութիւն են մատուցանում կախաղաններն ու ճնշումները... Միմիացն մի ճշմարտութիւն կայ և ով նրան չի հետեւում, ինչպիսի խարազաններ ել ունենայ իր ձեռին՝ կըկորչի...»

\* \* \*

Օմքողջ օրը և երեկոյեան խոնչացած, սոված գերուհուն ուտելիիք չէին տալիս։ Յետոյ եկել էր ներքինին և ցոյց տուել կուրբաշին, որով նրան պիտի հարուածէին։ Նորից գալիս էր փաշալին նախկին կինը, բայց սա միայն լաց էր լինում Գալիսանէի վրայ։ Զէր կարողանում նրան համոզել — ապարանքում ապօւշացած խեղճ կինը խօսք չէր զբուժում դրա համար։

— Միւնոյնն է, քեզ կըտիրեն ոյժով։ Դու գիտես, որ այդ է մեր ճակատագիրը։ Մէնք նման ենք էշի. ով ճեզ-

խփում է՝ նա էլ մեր տէրն է դառնում։ Աւելի վատ՝ եթէ քեզ բանս տանեն. այստեղ քեզանով կրզուարծանան գափիթիաները։ Փաշալին չես ուզի՞ կրպատկանես նրա ծառաներին՝ կեղտոտ, գարշահոտ. իսկ յետոյ միենին է — մահապատիժ։

Գալիանէն ուղղուեց։

— Իմ մասին երկիւղ մի՛ կրիր. այժմ միմիտին մահին եմ պատկանում։ Իմ զլին այլ իշխան չունեմ։ Եւ չեմ ել ունենայ...

\* \* \*

Գիշերուայ համար հրան նաւթի լամպ բերին և դռները փակեցին։

Վերջոպէս նա մենակ մնաց։

Սլքմ արդէն իր զիխավերեր մարդ չկայ, պէտք է աշխատել միայն մինչ առաւօտ ամեն բան վերջացնել։

Գանգը փշրել չի կարելի՝ սենեակը պատաճ է փափուկ գորգերով, պատերը նրանցով պաստառած։ Դանակ չկայ, չկայ մի բան, կուրծքը ընդանց ճակելու, լոեցնելու այն սիրտը, որ այն-

պէս թրթռում կերպով բարախում է վանդակում, ինչպէս խրտնած մի թրռուն։

Նստեց և ամբողջապէս խորասուզւեց անցեալի մէջ։

Միակ լոյսն ու խնդութիւնը անցեալումն է... Թիֆլիզի մի խաղաղ փողոց Սոլոյակում։ Փոքրիկ լռակեաց տներու Պղտիկ բակը ամբողջովին սերկելենով ստուերածած։ Նոնածաղկի անամօթաբար բաց արած կարմիր շուրթեր։ Վերանդա բաղմերանդ ապակիներից, որոնց միշով արեգակը շողշողում է պատի վրայ սուտականման, ինչպէս յակինթ և զմրուխտ։ և ծեր մալրիկի սիրելի, բարի գէմքը... Գալիանէն վերադարձաւ գիմնազիալից, գիրքը վերցրեց և դուրս վազեց, ստուերախիտ սերկելենու հեղաշամբոյր հովանու տակը նստեց։ Նա ժամանակ չունի — պէտք է շատ բան իմանալ և աշխատել՝ ժողովրդին օգնելու համար։ Հասան ծանր ժամանակներ։ Նրան խեղդում են թէ՛ Թիւրքիալում, թէ այստեղ։ Հայը չունի ապաստան՝ եթէ նրա կրծքում աղնիւ սիրտ է բարախում,

Եթէ իրան չի վաճառել յաղթանակող բռնութեան։ Հարուստները հանգիստ են, բայց նրանք իրանց յեղի առաջին թշնամիներն են։ Նա քառում է նրանց ժանր մեղքերը... Նրանցից մէկը ուղում է Գալիանէին։ Մայրիկը քնած՝ երազում է իր աղջկան միլիոնատէրի տալու։ Իւրատեսակ սէր է տածում դէպի նա և չգիտես ի՞նչ մեծ բաղդ է համարում ոսկեկառուց բանտր։

\* \* \*

Ի՞նչպէս էր նա հրաժեշտ տուել իր մօրը... ինչպէս էր հեկեկում... Ո՞զ է արդեօք նա. Ճաղկում են նուենիները իրանց փոքրիկ հայեաթում. առաւօտեան երգում են արդեօք թռչնիկները դալար սերկելենու վրայ և պատմում են Շուշանիկին հեքիաթներ։ Յիշում է արդեօք Գալիանէին, որը սովորեցրել էր նրան այդ հեքիաթները — պարզ ու անպանոյն, որպէս դժգոյն զանկածաղիկը իրանց պարտիզում։

Ժամանակ է... Քիչ անց արդէն ուշ կրլինի։

Եթէ չի կարելի ապրել ու կռուել՝ պէտք է այնպէս մեռնել, որ քո մասին պատմուածք ոյժ առաջ թուլերին և քաջալերէ երկչոտներին։

Ո՞չ ոչ ծեր փաշան, ոչ էլ նրա զազրելի, անարդ ծառաները չեն աիրանայ նրան։

Մահը նրա առաջին է... Ահա նա, այս ազօտ, հազիւ-հազ ծխացող լածպի մէջ...

Ժամ է... Առաւօտեան ուշ կըլինի։ Զինի սիրար ափսոսայ մատաղ կեանքի կորուստը, հրապուրի իրան պայծառ արեգը, անզորը ծովը, կապուտակ երկինըրը, անուշաբոլը ծաղիկները, մարդկային խինդն ու զուրդուրանքը... Գիշերով աւելի դիւրին է։ Նա կրվարագուրէ ամեն բանից չարագուշակ տեսիլներով։ Կարծես ասելիս լինի. «Ես մահուան նախատիպն եմ, մի՛ վախենա նրանից։ Նրանումն է իմ հանգիստն ու անզուրութիւնը։ Ամեն ինչ քեզ կըմատնի՛ բացի գերեզմանից»։

Ժամանակ է։

Սոսկալի տանջանք է, բայց լաւ է անցնել նրա վրայով։

Թող անիմուած լինի ալդ գեղեցկութիւնը: Եթէ դա զինէր՝ նրա դէմքին չէին յառի անյագ աչքեր: Նրան, Գայիանէին չէին զատի գերեվար ընկերու հենէրից և այժմ նա պառկելիս կըլինէր նրանց հետ գերեղմանում: Անարդ ձեռներ չէին մեկնի դէպի նա գազանային անյագութեամբ, և պիղծ հայեացըներ չէին ծածկի նրա մարմինը գարշելի միտումների վիրաւորիչ հետքերով:

Ժամ է:

— Եթէ ես իմացել եմ իմ ժողովրդի համար ապրել, թող նա գիտենալ, որ նրա համար չնահանչեցի տառապալից մահուանից:

Կամենում էր աղօթել:

Ինչու:

Սա աղօթք չէ միթէ: Անձնուրացութիւնն ու մարտիրոսութիւնը չեն հաշտեցնի միթէ արդար երկինքը նրա հետ: Նաւթը թափեց թասի մէջ:

Վերջին անգամ գալուկ դէմքը հպեց թոշնամ վարդերին: Նրանցով հրաժեշտ տուեց այն ամենին, որով միան կեանքը պայծառ է ու գեղեցիկ: Դրանք կը զցեց թասի մէջ: Կըակ տուեց: Բոյը

բռնկեց հսկայական լեզուի ձեռով: Փողփողեց, սե-սե ըուլաներով ձգուեց դէպի առաստաղ:

Գայիանէն աչքը խուփ տռւեց...  
— Տէ՛ր... ների՛ր...

Վերցրեց թասը և իր դէմքը արագօրէն խոնարհեց նրա մէջ:  
Գերմարդկային մի աղաղակ արթնացրեց հարեմը:

Կոտրատեցին գոները Դաւաճան բոյը սոլսողում էր ամեն կողմ: Գորգի վրայ չլաձգօրէն գալարւում էր ալլանդակ, ծխակալած, բայքայւող ինչ որ բան...

\* \* \*

Հին մէլգանում եռում է մի անսովոր իրարանցում:

Ամեն կողմից մարդ է թափւում: Գեղեցկուհի Գայիանէի լուրը սփառեց քաղաքում: Կիսալրած աղջկայ մէջ զեռ ալնքան կեանք էր պահպանուել, որ զարդների գատավնիոր կարելի էր իրագործել: Տակերը փակուեցին իրանց տներում, նրանց չէր կարելի դուրս

դալ: Նոքա գիտէին, թէ ի՞նչ է մահ-  
ճեղական խուժանը այդպիսի ըոպէ-  
ներին:

Արեր այնպէս էր լուսաւորում, որ  
նրա անթարթ հայեացը տակ ծովը  
վառւեց կապուտ կրակով: Նաւամա-  
տոյցներում ժածանւում էին առևտրա-  
կան նաւերի անթիւ դրօշակներ... Առա-  
գաստները հեռուից թւում էին սպի-  
տակ բոցի փնջիկներ: Սալայատակի  
քարերը ալրում էին: Դահիճը կառափ-  
նատեղի աստիճանի վրայ նստած  
քնեց... Այդ տօթին կախաղանի փայ-  
տերը լալիս էին ծիւթեղէն արտասուք-  
ներով: Շները մտել էին սասւերների  
տակ և կաղկանձում էին՝ երբ զովու-  
թեան կարիք զգացող մարդիկ անո-  
ղորմաբար քշում էին նրանց: Մէջդանի  
հին կիպարիսները բուրում էին ուժ-  
դին և թունդի Մաղկավաճառները գէնց  
անդադար սրսկում էին ծաղիկները,  
բայց չուրը գոլորշիանում էր, առանց  
կարողանալու պապակ պսակները զո-  
վացնել:

— Բերում են, բերում...  
Նեղ ու ջեխոտ փողոցից լսում էին

աղմուկներ և անէծքներ: Լսելի էր  
թմբկահարութիւն, սմբակների տրո-  
փիւն: Ճռհռան սալլի միջին, անծածկ՝  
ինչպէս բացուած վէրք, նալում էր —  
առանց տեսնելու — դուրս թափած աչ-  
քերով, ալրուած մի դէմք: Կուրծքը  
խռպոտ ձայնով շնչում էր... Տառապող  
մարմինը շղաձօրէն քաշքշում էր...

Սափրած նակառով մէկ տղայ մի քար  
վերցրեց և նետեց աղչկայ վրայ:

— Շների տառաջ զցեցէք, բղաւեց մի  
պառաւ — որին սալլի սեղմել էր պա-  
տին — և թքեց դէմքի ուղիղ զանդ  
վէրքի վրայ:

— Ջուր, ջուր... խռպում էր թրշ-  
ւառը:

ինչ որ մի թուրք խղճաց, ամանը  
լցրեց և հէնց ուղում էր մօտենալ՝  
զափթիան խփեց ամանին և ջուրը  
թափուց տօթակէղ սալայատակի  
վրայ:

Քնատ դահիճը զարթնեց... Թոկը  
թրչեց: Այն ջուրը, որ մերթեցին նա-  
կատակին՝ պէտք եկաւ նրա կախա-  
ղանի օղակին:

\* \* \*

Այս պատմուածքը մի բանի տարի  
առաջ հաղորդել էին Տրապիզոնում:  
Ես մոռացել եմ «ժողովրդի համար  
նահատակուածի» անունը: Ով յիշում  
է՝ թող ուղղի:

Գեղեցկուհու շիրիմը անյախտ է:  
Հայ ծերունին պատկերաւոր ձեռվ  
աւելացրել էր. «Ամեն մէկիս սիրար  
նրա դագաղն է: Նա թաղուած է ժո-  
ղովրդի յիշողութեան մէս: Նրա չար-  
չարանքով մենք գնեցինք բաղդաւո-  
րութիւն և ազատ իրաւունք»:

Մէրդանում հանգիստ կանգնած էին  
սե, վեհապանձ կիպարիսները: Կա-  
պուտակ ծովը քծին էր տալիս դալազարդ  
ծովափին: Սուրբ և լուրջ էր հարա-  
ւային երկնքի անհասանելի բարձ-  
րոյքը... Մէրդանում ծախում էին փար-  
թամ, ալ վարդեր... նրանց քոյրերը,  
որոնք ընդունել էին մարտիրոսուհու  
վերջին համբոյը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0333038

12.326

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

**ԱՆԻ ՀՐԱՏ. ԸՆԿ.**

հետևեալ հրատարակութիւնները՝

- 1) Բաց նամակն. Ա. սերիան (8 հատ),  
(սպառուած). . . . . Գին է 60 կ.
- 2) Հայ հերոսուհին, Ա. նեմիրովիչ-  
Դանչենկոյի, թարգմ. Ա. Ա.  
Գին է . . . . . 10 "
- 3) Кавказские Наброски, изъ вос-  
споминаний русск. офице-  
ра—Владим. Вадина. Цѣна 10 ռ.

«ԱՆԻ ՀՐԱՏ. ԸՆԿ.» յայտարարումէ առաջին  
ՆԱՌՉԱԿԱՆ

**ՄՐՑԱՆԱԿԱՐԱԾԽՈՒԹԻՒՆ**

ՃԱԶՈՂ ՔՍԿԻԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Էսկիզի նիւթը՝

**ՍԵՂԱՆ, ԱԹՈՈ եւ ՊԱՅԱՐԱՆ**

**ՃԱԶԿԱԿՈՒ ՃԱՇԱԿՈՎ**

(Երանեակ փորագրութեամբ, ինքրուստայ ը թէզբօյ)

I.	մրցանակը . . . . .	100 լուր.
II.	" . . . . .	50 "
III.	" . . . . .	25 "

Մանրամատութեանը սադրէշի գ. համարած.